«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝ **05.11.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝ **ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա**
Առաջնություն՝ **ՀՊԼ (2026-2027)**
Խաղ՝ **«Սյունիք» - «ԲԿՄԱ», 25.10.2026թ.**
Վարույթ՝ **ՊԼ-065**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՊԼ-065 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի կողմից 2026 թվականի նոյեմբերի 04-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն եւ ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կանոնակարգով (2026թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա

Էլեկտրոնային փոստի հասցե՝ footballacademy@ffa.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04.11.2026թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Նազելի Արսենյան

Վարույթ՝	ՊԼ-065
Խախտում՝	«ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արշակ Պետրոսյանի (30784) կողմից գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում կատարելը / Հավելված 1 Բ, 14-րդ կետ
Առաջնություն՝	ՀՊԼ (2026-2027)
Խաղ՝	«Սյունիք» - «ԲԿՄԱ », 25.10.2026թ.

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2026 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ ԲԿՄԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

Հիմք ընդունելով Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2026 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արշակ Պետրոսյանին (30784) որակազրկել 2 (երկու) խաղով։ Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել։ «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արշակ Պետրոսյանի (30784) նկատմամբ փորձաշրջան սահմանել 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2027 թվականի փետրվարի 25-ը ներառյալ։

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: